ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/23

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 15.02.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1. ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ.

Բողոքաբերը, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ձևով վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների գնման ընթացակարգին (այսուհետ՝ ընթացակարգ):

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 27.12.2019թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110 որոշմամբ բավարարվել է բողոքաբերի կողմից 17.12.2019թ. ներկայացված բողոքը:

Գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. թիվ 7 արձանագրության համաձայն՝ որոշվել է բողոքաբերին տրամադրել մեկ աշխատանքային օր «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար: Բողոքաբերի կողմից գնահատող հանձնաժողովին է ներկայացվել ճշգրտված շահութահարկի հաշվետվությունը:

Գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. թիվ 8 արձանագրության 1.3 կետի համաձայն բողոքաբերի հայտը մերժվել է: Նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

2.ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. թիվ 8 արձանագրությունը կազմված է օրենքի խախտմամբ, հետևաբար, այն պետք է վերացվի հետևյալ պատճառաբանությամբ.

Որպես հայտի մերժման փաստական հանգամանք արձանագրության մեջ նշված է. «Գնահատող հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ էին ծագել առ այն, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գլոբալ Լիֆտ» ՍՊԸ-ի ներկայացրած մասնագիտական փորձառության փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ (մասնավորապես՝ նշված պայմանագիրը, հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ ապրանքագիրը չի համապատասխանում իրականությանը), ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովի քարտուղարը գրություն էր ուղարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քարտուղար Է. Գևորգյանին պարզաբանում ստանալու համար: 29.11.2019թ. ստացվել է պատասխան գրություն...»:

Այս կապակցությամբ նշեմ, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ գրություն ՀՀ ՊԵԿ չի ուղարկվել:

Բացի այդ, ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ՊԵԿ-ի գրությունը ստացվել է դեռևս նախքան 14.01.2019թ., և 12.11.2018թ. թիվ 4 արձանագրության մեջ նշվում է այն մասին, որ ներկայացված հաշիվ ապրանքագիրը կասկածներ է առաջացրել գնահատող հանձնաժողովի մոտ, սակայն այդ մասով գնահատող հանձնաժողովը բողոքաբերի հայտը չի մերժել:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս ստացվեց, որ դեռևս 12.11.2018թ. բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերը կասկած են առաջացնում գնահատող հանձնաժողովի մոտ, սակայն վերջինս հայտը մերժում է այլ հիմքով:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը ցուցաբերել է կանխակալ և սուբյեկտիվ մոտեցում, իրականությանը չհամապատասխանող հիմնավորումներով մերժել է բողոքաբերի հայտը, իսկ ընթացակարգը հայտարարել է չկայացած, արդյունքում խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Տվյալ պարագայում հանձնաժողովը որպես հայտը մերժելու իրավական հիմք նշել է Կարգի 67-րդ կետը, համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Վերը նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ գործադիրը սահմանել է կոնկրետ սուբյեկտ, ով կարող է ստուգել մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը՝ համապատասխան հարցում ուղարկելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Այստեղից հետևում է, որ նման լիազորությամբ օժտված է բացառապես գհանատող հանձնաժողովը, որը տվյալ պարագայում նման հարցում չի իրականացրել և բողոքաբերի կողմից ներկայացված տվյալների վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից ցանկացած այլ անձի տրամադրված ցանկացած տեղեկատվություն ձեռք է բերվել ընթացակարգի խախտմամբ և չի կարող հիմք հանդիսանալ հայտը մերժելու համար:

Բացի այդ, կասկածի առաջանալը դա սուբյեկտիվ գործոն է, և գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ որևէ նշում առկա չէ այն մասին, թե կասկածի առաջանալը կոնկրետ ինչ հանգամանքով է պայմանավորված:

Ընդհանրացնելով՝ նշեմ, որ բողոքաբերի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերն ամբողջությամբ ճիշտ են, բավարարում են հրավերի պահանջներին և հիմք են վերջինիս հետ պայմանագիր կնքելու համար: Հաշվի առնելով

վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝ խնդրում եմ Բողոքը բավարարել, այն է՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 14.01.2019թ. թիվ 8 արձանագրության 1.3 կետը և «Գլոբալ Լիֆտ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 14.01.2019թ. թիվ 8 արձանագրության 1.4 կետը վերացնելու մասին որոշում:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել «Գլոբալ Լիֆտ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշում»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ փաստաբան Գոռ Գրիգորյանը:

2. <u>«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն 02.11.2018թ. թիվ 3 արձանագրությամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ինչի արդյունքում սահմանված ժամկետում ներկայացրել էր մասնագիտական փորձառության մասին հավաստող փաստաթղթեր:

Սակայն մասնակցի մասնագիտական փորձառության ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ էին առաջացել առ այն, որ ներկայացված փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ: Մասնավորապես՝ նշված պայմանագրին կից ներկայացված էլեկտրոնային հաշիվ ապրանքագիրը չի համապատասխանում իրականությանը, ինչի հետևանքով 12.11.2018 թվականին գնահատող հանձնաժողովի քարտուղարը գրություն էր ուղարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քարտուղար Է. Գևորգյանին՝ պարզաբանում ստանալու համար: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից պատասխանը տրամադրվել է 29.11.2018 թվականին (թե՛ ՊԵԿ-ին ուղարկված գրությունը, թե՛ նրանց կողմից տրամադրված պատասխանը ներկայացվել են բողոքը քննող անձին):

Ի պատասխան «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/23 բողոքի վերաբերյալ հայտարարության, թե 12.11.2018 թվականի թիվ 4 արձանագրության մեջ նշված է տեղեկատվություն կասկածների մասին, սակայն հայտը մերժվել է այլ հիմքով,

կարող ենք ասել, որ 30.11.2018թ-ի թիվ 5 արձանագրության 1.1 և 1.2 կետերով շարադրված են այն փաստերը, որոնց արդյունքում մասնակցի հայտը մերժվել է:

Բացի այդ, մասնակցի հայտը մերժվել է համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի, քանի որ մասնակցի տրամադրած մասնագիտական փորձառության մասին հավաստող փաստաթղթերում հայտնաբերվել է անճշտություն, և ոչ թե անհամապատասխանություն: Իսկ անճշտություն հայտնաբերելու դեպքում համաձայն վերոնշյալ կետի մասնակցին չի տրամադրվում մեկ օր շտկման հնարավորության և տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ մասնակցի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Սարգսյանը և Տաթևիկ Հովհաննիսյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.10.2018թ. նիստի թիվ 2, 02.11.2018թ. նիստի թիվ 3 և 30.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը, Բողոքներ քննող անձի 27.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110 որոշումը.

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ն:

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերումը:

«ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ թիվ 3 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 16.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է, որ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 44,785,200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը 02.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության.

- 1.2 կետով որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին ճանաչել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:
- 1.3 կետով որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ից պահանջել սահմանված ժամկետներում ներկայացնել Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ:

«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը

հիմնավորող փաստաթղթեր՝ 06.11.2018թ. ներկայացրել է «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի և «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի միջև 13.04.2017թ. կնքված N02/մ/17 պայմանագիրը, որի առարկա է հանդիսացել «Բժշկական վերելակի, ինչպես նաև վերելակի նախագծման, մոնտաժման և կարգաբերման աշխատանքների» ձեռքբերումը: Նշված պայմանագրին կից ներկայացվել է նաև 23.10.2017թ. 16:13:49 դուրս գրված ապրանքների մատակարարման թիվ A4424813352 հարկային հաշիվը՝ վճարման ենթակա 23,604,000 դրամ գումարի չափով:

Պատվիրատուն 05.11.2018թ. գրությամբ դիմել է «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ին և պահանջել է ներկայացնել վերը նշված փաստաթղթերի բնօրինակները, ինչից հետո, 08.11.2019թ. Ընկերությունն էլեկտրոնային եղանակով «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է ի գիտություն չընդունել ուղարկված որակավորման փաստաթղթերը, և հավաստիացրել է, որ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կուղարկվեն փաստաթղթերի շտկված տարբերակները: Այնուհետև, Ընկերությունը կրկին Հանձնաժողովին է ներկայացրել «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի և «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի միջև 13.04.2017թ. կնքված N02/մ/17 պայմանագիրը, որի առարկան այդ անգամ արդեն նշված է եղել՝ «Բշկական վերելակի ձեռքբերումը»: Նշված պայմանագրին կից դարձյալ ներկայացվել է 23.10.2017թ. 16:13:49 դուրս գրված ապրանքների մատակարարման նույն համակարակալմամբ՝ թիվ A4424813352 հարկային հաշիվը, որում սակայն, վճարման ենթակա գումարի չափը նշված է եղել 21,000,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 30.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 103,764,647 ՀՀ դրամ, ինչը գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 88,555,421 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 30.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ձևով վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարման էլեկտրոնային գնման արդյունքում գնահատող հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ էին ծագել առ այն, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի

ներկայացրած մասնագիտական փորձառության փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ (մասնավորապես՝ նշված պայմանագրին կից ներկայացված էլեկտրոնային հաշիվ ապրանքագիրը չի համապատասխանում իրականությանը), ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովի քարտուղարը պարզաբանում ստանալու համար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քարտուղար Է. Գևորգյանին ներկայացրել է հարցում՝ հետևյալ բովանդակությամբ.

««Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ձևով վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների իրականացման պետական գնման ընթացակարգ, որի արդյունքում «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ն սույն թվականի նոյեմբերի 6-ին որպես նախկինում կատարված պայմանագիր ներկայացրել է իր և «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի միջև 13.04.2017թ. կնքված N02/մ/17 պայմանագիրը, պայմանագրի հանձնման-ընդունման ակտը, ինչպես նաև NԱ4424813352 հաշիվ-ապրանքագիրը: Ուսումնասիրելով նշված կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել, որ ներկայացված փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ, մասնավորապես՝ ներկայացված էլեկտրոնային հաշիվ ապրանքագիրը չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից՝ կից ներկայացնում եմ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի և հաշիվ ապրանքագրի էլեկտրոնային տարբերակը և և խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե արդյոք 23.10.2017թ. դուրս գրված NԱ4424813352 23,604,000 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագիրը համապատասխանում էիրականությանը, թե՝ ոչ»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 16.11.2019թ. թիվ 1/6-1/7487318 պատասխան գրությամբ հայտնել է, որ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 23.10.2019թ. դուրս է գրվել էլեկտրոնային հարկային հաշիվ, որն էլ գնորդ՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել է նույն օրը: Գրությանը կից ներկայացվել է NԱ4424813352 հաշիվ-ապրանքագրի պատճենը, որում նշված վճարման ենթակա գումարը կազմում է 21,000,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 30.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ 29.11.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրություն, որին կից ուղարկվել է վերոնշյալ էլեկտրոնային հարկային հաշիվը: Համեմատելով տվյալ հաշիվը «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթի հետ, ի հայտ է եկել, որ ներկայացված հարկային հաշվում նշված են կեղծ տվյալներ, մասնավորապես՝

- Ապրանքի անվանումը («Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով՝ ներառյալ նախագծում, մոնտաժում, կարգաբերում»՝ «Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով»-ի փոխարեն):

- Պայմանագրի արժեքը (23,604,000 ՀՀ դրամ՝ 21,000,000 ՀՀ դրամի փոխարեն):

Նույն արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ տվյալ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից կատարվել է հարցում, ինչի արդյունքում ի հայտ է եկել, որ մասնակցի հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում նրա պարտավորությունները (10,3,764,647 ՀՀ դրամ) գերազանցել են ակտիվները (88,555,421 ՀՀ դրամ), ինչը հիմք է հանդիսանում «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 63-րդ կետի 3-րդ ենթակետի:

«ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ն 17.12.2018թ ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության 1.3 կետով որոշել է Ընկերությունից պահանջել սահմանված ժամկետում ներկայացնել Հրավերով և հայտով սահմանված որակավորման փաստաթղթերը և միաժամանակ համապատասխան հարցում ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Ընկերությունը 08.11.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողովին է ներկայացրել համապատասխան փաստաթղթերը, սակայն սխալմամբ ի թիվս այլ փաստաթղթերի ուղարկել է աշխատանքային (սևագիր) տարբերակով կազմված հաշիվ-ապրանքագիր, որի թիվը տարբերվում է իրական հաշվի ապրանքագրի թվից: Նույն օրը Ընկերությունն էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողովին տեղեկացրել է, որ նախորդ նամակով ուղարկված փաստաթղթերը չընդունել ի գիտություն և 09.11.2018թ. ուղարկել է նոր փաստաթղթեր: Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական

եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ տրամադրված եզրակացության համաձայն «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի նախորդ տարվա պարտավորությունները գերազանցում են ակտիվները և հիմք ընդունելով Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդ տարվա ընթացքում պարտավորություններն ակտիվներին գերազանցելու փաստը մերժել է վերջինիս հայտը, խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 47-րդ կետի պահանջը»:

«ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով Բողոքներ քննող անձին խնդրել է.

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 30.11.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետը և կարգի 47-րդ կետով նախատեսված կարգով հնարավորություն ընձեռնել բողոքաբերին շտկելու առկա անհամապատասխանությունը.

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 30.11.2018թ. թիվ 5 արձանագրության 1.3-րդ կետը վերացնելու մասին որոշում.

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 06.12.2018թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետը վերացնելու մասին որոշումը»:

Բողոքներ քննող անձը՝ քննելով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 17.12.2018թ. ներկայացված բողոքը, 27.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110 որոշմամբ նշված բողոքը բավարարել է՝ պարտավորեցնելով ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Կիրառել Կարգի 47-րդ կետը և ծանուցել «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ին՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.

2. Դադարեցնել 30.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետով կայացված՝ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

3. Դադարեցնել 06.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշումը:

Հիմք ընդունելով Բողոքներ քննող անձի 27.12.2018թ. կայացած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110 որոշումը՝ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.01.2019թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրությամբ չեղյալ է հայտարարել 30.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը, ինչպես նաև՝

06.12.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը:

10.01.2018թ. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն էլեկտրոնային ծանուցմամբ առաջարկել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկում՝ կապված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանության հետ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի:

Այնուհետև, 14.01.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ 10.01.2018թ. «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար: Ընկերությունը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին ներկայացրել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի 2017թ. հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվետվությունը՝ նշելով, որ ՍՊԸ-ի ակտիվները կազմել են 88,555,421 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 81,364,647 ՀՀ դրամ: Գնահատող հանձնաժողովը բավարար է համարել «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած շտկումը:

Միաժամանակ, նույն արձանագրության 1.3 կետով Հանձնաժողովը որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի, այն է՝ եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականության չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Գնահատող հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել, որ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացված մասնագիտական փորձառության փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ, մասնավորապես՝ ներկայացված պայմանագիրը, ընդունման-հանձնման արձանագրությունը և հաշիվ ապրանքագիրը չեն համապատասխանում իրականությանը, ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովի քարտուղարը դիմել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քարտուղար Է. Գևորգյանին՝ պարզաբանում ստանալու համար:

29.11.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրություն, որին կից ուղարկվել է վերոնշյալ էլեկտրոնային հարկային հաշիվը: Համեմատելով տվյալ հաշիվը «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

փաստաթղթի հետ, ի հայտ է եկել, որ ներկայացված հարկային հաշվում նշված են կեղծ տվյալներ, մասնավորապես՝

- Ապրանքի անվանումը («Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով՝ ներառյալ նախագծում, մոնտաժում, կարգաբերում»՝ «Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով»-ի փոխարեն):
- Ընդհանուր գումարը ոչ թե 23,604,000 ՀՀ դրամ է, այլ՝ 21,000,000 ՀՀ դրամ է:

Նույն արձանագրության 1.4 կետով Հանձնաժողովը որոշել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքով հայտնած դիրքորոշումն ամբողջությամբ և նշեց, որ Հանձնաժողովի 14.01.2019թ. թիվ 8 արձանագրությամբ կայացրած՝ Ընկերության հայտը մերժելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումները կայացվել են օրենքի խախտմամբ, այն պատճառաբանությամբ, որ Հանձնաժողովի կողմից որպես հայտի մերժման փաստական հանգամանք արձանագրության մեջ նշված են Հանձնաժողովի մոտ առաջ եկած իբր հիմնավոր կասկածներ առ այն, որ «Գլոբալ Լիֆտ» ՍՊԸ-ի ներկայացրած մասնագիտական փորձառության փաստաթղթերում կան իրականությանը չհամապատասխանող տվյալներ (մասնավորապես՝ նշված պայմանագիրը, հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ ապրանքագիրը չի համապատասխանում իրականությանը), մինչդեռ Ընկերության կողմից նշված փաստաթղթերը ներկայացվել են սխալմամբ, որոշակի անճշտություններ են պարունակել, քանի որ եղել են աշխատանքային, սևագիր տարբերակներ, այդ իսկ պատճառով էլ Ընկերությունը Հանձնաժողովին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ խնդրել էր նշված փաստաթղթերը չընդունել ի գիտություն, և պարտավորվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին ներկայացնել դրանց շտկված տարբերակները:

Բողոքաբերն ուշագրավ որակեց այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ-ից ստացված գրությունը ստացվել է դեռևս նախքան 14.01.2019թ., և 12.11.2018թ. թիվ 4 արձանագրության մեջ նշվում է այն մասին, որ ներկայացված հաշիվ ապրանքագիրը կասկածներ է առաջացրել գնահատող հանձնաժողովի մոտ, սակայն բողոքաբերի հայտը մերժվել է միանգամայն այլ՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմնավորմամբ: Իսկ արդեն 14.01.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը

մերժել՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի, այն է՝ եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականության չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Բացի այդ, ըստ բողոքաբերի, կասկածի առաջանալը սուբյեկտիվ գործոն է, և Հանձնաժողովի արձանագրության մեջ առկա չէ որևէ նշում այն մասին, թե հատկապես ինչ հանգամանքով էր պայմանավորված նման կասկածի առաջացումը:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց, նշելով, որ 30.11.2019թ. թիվ 5 արձանագրության 1.1 և 1.2 կետերով նշվել են այն փաստերը, որոնց հիմքով Ընկերության հայտը մերժվել է, և եթե 1.2 կետով նշված հիմքի վերաբերյալ առկա է Բողոքներ քննող անձի ԳԲՔԱ-ԱՄ-2018/110 որոշումը, որի ուժով Ընկերությանը տրամադրվել է «ֆինանսական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը շտկելու հնարավորություն, ապա հիշյալ արձանագրության 1.1 կետով արձանագրվել է ոչ թե Ընկերության փաստաթղթերում առկա Հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, այլ՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է Կարգի 67-րդ կետի համաձայն, որը շտկման հնարավորություն չի նախատեսում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումնղերի գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանութ-յունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող

ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)

-6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն (...) և ֆինանսական միջոցներ:

-12-րդ հոդվածի համաձայն՝ եթե հայտնաբերվում է մասնակցի կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցչի գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարք, ապա դրա ի հայտ գալու օրը պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը:

- Հանձնաժողովը 02.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

- Որպես Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր Ընկերությունը 06.11.2018թ. ներկայացրել էր «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի և «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի միջև 13.04.2017թ. կնքված N02/մ/17 պայմանագիրը, որի առարկա է հանդիսացել բժշկական վերելակի՝ իրեն համար նախատեսված մետաղական հորանով, ներառյալ վերելակի նախագծման, մոնտաժման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերումը: Նշված պայմանագրին կից ներկայացվել է նաև 23.10.2017թ. 16:13:49 դուրս գրված ապրանքների մատակարարման թիվ Ա4424813352 հարկային հաշիվը՝ վճարման ենթակա 23,604,000 ՀՀ դրամ գումարի չափով:

- 08.11.2019թ. Ընկերությունն էլեկտրոնային եղանակով դիմել է Հանձնաժողովին՝ խնդրելով ի գիտություն չընդունել ներկայացված փաստաթղթերը, և պարտավորվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել փաստաթղթերի շտկված տարբերակները:

- Ընկերությունը երկրորդ անգամ Հանձնաժողովին է ներկայացրել «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի և «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի միջև 13.04.2017թ. կնքված նույն՝ N02/մ/17 պայմանագիրը, որի առարկան է հանդիսացել բժշկական վերելակի ձեռքբերումը: Պայմանագրին կից դարձյալ ներկայացվել է 23.10.2017թ. 16:13:49 դուրս գրված ապրանքների մատակարարման նույն՝ թիվ Ա4424813352 հարկային հաշիվը, սակայն այդ անգամ արդեն վճարման ենթակա գումարի չափը նշված է եղել՝ 21,000,000 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովը 30.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 103,764,647 ՀՀ դրամ, ինչը գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 88,555,421 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովի քարտուղարը դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանին՝ խնդրելով տրամադրել տեղեկտվություն Ընկրության կողմից ներկայացված՝ 23.10.2017թ. թվագրված ՈԱ4424813352 23,604,000 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրի իսկության վերաբերյալ:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 16.11.2019թ. պատասխան գրությամբ հայտնել է, որ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 23.10.2019թ. դուրս է գրվել էլեկտրոնային հարկային հաշիվ, որն էլ գնորդ՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել է նույն օրը: Գրությանը կից ներկայացվել է ՈԱ4424813352 հաշիվ-ապրանքագրի պատճենը, որում նշված վճարման ենթակա գումարը կազմել է 21,000,000 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովը 30.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարկային հաշվում նշված են կեղծ տվյալներ, մասնավորապես՝ ապրանքի անվանումը («Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով՝ ներառյալ նախագծում, մոնտաժում, կարգաբերում»՝ «Բժշկական վերելակ իրեն համար նախատեսված մետաղական հորանով»-ի փոխարեն), և պայմանագրի արժեքը (23,604,000 ՀՀ դրամ՝ 21,000,000 ՀՀ դրամի փոխարեն):

- Նույն արձանագրությամբ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է կարգի 63-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- Հիմք ընդունելով Բողոքներ քննող անձի 27.12.2018թ. կայացած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110 որոշումը՝ Հանձնաժողովը 10.01.2019թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ չեղյալ է հայտարարել 30.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը, ինչպես նաև՝ 06.12.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը:

- 10.01.2018թ. «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար, և Ընկերությունը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին ներկայացրել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի 2017թ. հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվետվությունը՝ որի համաձայն՝ վերջինիս ակտիվները կազմել են 88,555,421 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 81,364,647 ՀՀ դրամ: Գնահատող հանձնաժողովը բավարար է համարել «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած շտկումը:

-14.01.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ վերջինիս կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվության՝ իրականությանը չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ գնման գործընթացի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացրած որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող, հետևաբար, Բողոք քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը, «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը պարտավոր էր կիրառել Օրենքի 12-րդ հոդվածը և գնման գործընթացի շրջանակներում հայտնաբերված՝ «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հակաօրինական արարքն ի հայտ գալու օրը այդ մասին գրավոր տեղեկացնել իրավապահ մարմիններին, ինչը Հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 15.02.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ